# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հրավերի պարզաբանման մասին

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն**

**Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ»**

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի** կարիքների համար **դեղագիտական ֆակուլտետի միջազգային հավատարմագրման նպատակով լաբորատոր սարքավորումների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ԵԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2025 թվականի փետրվարի 21-ին** ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ **2025 թվականի փետրվարի 24-ին** տրամադրված պարզաբանումները.

**Հարցադրում N 1:** Հարգելի Գործընկերներ «ԵԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) վերլուծությամբ պարզվել է, որ բարձր արդյունավետության հեղուկային քրոմատագրի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին: 2-րդ չափաբաժնով նախատեսված բարձր արդյունավետության հեղուկային քրոմատագրի տեխնիկական բնութագրի համար սահմանվել են խտրական և միմյանց հակասող չափորոշիչներ, մասնավորապես՝ • ներկայացված չափորոշիչները խտրական են, քանի որ արտատպված են կոնկրետ մեկ արտադրողի համացանցային կայքում հասանելի տեխնիկական բնութագրից (ասվածին ապացույց՝ հրավերում նշված էլեկտրոնային հասցեին է ուղղարկվել արտատպված բնութագիրը), ավելին՝ չեն սահմանվել առավելագույն կամ նվազագույն հատկանիշներ, որոնք հանգեցնում են կոնկրետ մոդելի ապրանքի ձեռքբերմանը՝ հակասելով «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին, • ներկայացված չափորոշիչները միմյանց հակասում են, քանի որ տեխնիկական բնութագրում ներկայացված է անալիտիկ բարձր արդյունավետության հեղուկային քրոմատագրի պոմպ, ներարկման համակարգ, որը նախատեսում է կիսապրեպարատիվ և պրեպարատիվ ներարկումներ, սակայն դետեկտորի համար պահանջվում է տարբեր միկրո/նանո բարձր արդյունավետության հեղուկային քրոմատագիր նախատեսված հոսքային խցիկներ, որոնք միմյանց հետ մեկ համակարգում անհամատեղելի են: Վերոգրյալով պայմանավորված, միաժամանակ մրցակցության հավասար պայմաններ ապահովելու համար՝ առաջարկում ենք Հրավերում կատարել փոփոխություններ՝ այն համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

**Պարզաբանում N 1:** Ի պատասխան հարցմանը հայտնում ենք հետևյալը՝

Տեխնիկական բնութագիր կազմելու պարտադիր և թույլատրելի նորմերը չեն սահմանափակվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: Դրանք հստակ շարադրված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետով և կազմում են դրանց բոլորի ամբողջականությունը, մասնավորապես՝

**«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝**

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը,

պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

**ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի համաձայն՝**

22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

Վերոնշյալ սահմանված պարտադիր և թույլատրելի նորմերի ամբողջականությունը և պահպանումը հենց ապահովում են հարցմամբ նշված Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բացի այդ,

**«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝**

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

**Նույն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝**

Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

**Նույն Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝**

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ.

1. «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագիրը կազմված է պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պարտադիր և թույլատրելի նորմերը:

2. Պատվիրատուն ինքնուրույն է որոշում և համապատասխանաբար կազմում իր կարիքների համար անհրաժեշտ գնման առարկայի տեխնիկական բնութագիրը՝ պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պարտադիր և թույլատրելի պահանջները:

3. Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով սահմանված ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը կազմված է ելնելով պատվիրատուի իրական կարիքներից, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրության վերոնշյալ պահանջները և չեն պարունակում որևէ հղում:

4. Թեև Ձեր կողմից հարցմամբ չի ներկայացվել թե գնումների օրենսդրության ո՞ր կետն է պարտադրում սահմանել միջակայքեր և տիրույթներ, այնուամենայնիվ հայտնում ենք, որ բնութագրի չափորոշիչների համար կամ սահմանված են միջակայքեր, կամ նշված է «ավել քան», «պակաս քան» արտահայտությունները, օրինակ.

Ավելի քան 600 բար կամ 8702 psi – ավելի քան 5 մլ/րոպե

Ավելի քան 200 բար կամ 2901 psi- ավելի քան 10 մլ/րոպե

Ուստի խնդրում ենք ուշադիր ուսումնասիրել հրավերը

5. Դետեկտորի համար առաջարկված հոսքային բջիջները նշանակում են այն, որ սարքը պետք է ունենա բոլոր տարբերակներով աշխատելու հնարավորություն՝ կախված կատարվելիք հետազոտություններից:

6. Ձեր կողմից հարցմամբ չի ներկայացվել, թե գնման ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրի մասնավորապես որ չափորոշիչը, կամ չափորոշիչներն են

սահմանափակում մրցակցությունը, և բացի գրավոր հայտարարությունից չեն ներկայացվել սահմանված տեխնիկական բնութագրով ապրանքի միայն մեկ արտադրողին համապատասխանության որևէ հիմնավորում: Բացի այդ, գործող գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չեն սահմանվում ապրանքի տեխնիկական բնութագրին մեկ արտադրողի համապատասխանության որևէ սահմանափակումներ: Հարցմամբ կցված արտատպված բնութագիրը որոշակիորեն հիմնավորում է վերջինիս և հրավերով սահմանված բնութագրերի համապատասխանությունը, սակայն չի հիմնավորում դրա միակ լինելը, սակայն եթե հարցման համապատասխան մասը վերաբերելի է կարգի 22-րդ կետի պահպանմանը, ապա նշենք, որ նշված կետի համաձայն բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ, այլ ոչ թե արտադրողներ:

7. Որևէ ապրանքի կամ ապրանքների արտադրողի կամ արտադրողների կողմից ՀՀ տարածքում մեկ կամ մի քանի ներկայացուցիչ ունենալը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չի սահմանափակում այդ արտադրողի կամ արտադրողների կամ վերջիններիս ներկայացուցիչների մասնակցությունը գնման ընթացակարգերին:

8. Միաժամանակ հայտնում ենք, որ հրավերի տեխնիկական բնութագիր հավելվածում բոլոր ապրանքատեսակների մասով սահմանված է հետևյալ պայմանը՝

***Եթե առկա են հղումներ որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը:**

Վերոնշյալով պայմանավորված հայտնում ենք, որ եթե հարցումը կատարված է մասնակցության նպատակով և հնարավոր մասնակիցը գտնում է, որ կոնկրետ իր մասնակցությունը սահմանափակվում է ընթացակարգի հրավերի ցանկացած, այդ թվում նաև 2-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագրի այն հատկանիշներով, որոնք իր համոզմամբ և հետագայում հստակ հիմնավորմամբ պարունակում են հղում կամ հղումներ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ապա այդ հատկանիշների մասով կիրառական է «կամ համարժեք» արտահայտությունը, պայմանով, որ որպես համարժեք առաջարկվող հատկանիշները պետք է համարժեք լինեն պատվիրատուի այն կարիքին, որի բավարարման նպատակով իրականացվում է տվյալ գնման գործընթացը:

Հրավերով սահմանված է նաև, որ ապրանքների գնման դեպքում ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող **Պավել Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **010 301250 (ներքին համար 250)**:

Էլեկտրոնային փոստ՝ **marketing.ysmu20@gmail.com**:

**«ԵԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով՝

**Հանձնաժողովի նախագահ՝** ____________ (ստորագրությունը) **Բագրատ Ենոքյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** ____________ (ստորագրությունը) **Արուսյակ Ժամհարյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** ____________ (ստորագրությունը) **Պավել Գաբրելյան**

ОБЪЯВЛЕНИЕ

**о разъяснении приглашения**

**Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссией № 2 от 24-го февраля 2025года и опубликовывается в соответствии со статьей 29 Закона Республики Армении «о Закупках».**

**Код процедуры «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ»**

Оценочная комиссия по процедуре закупки под кодом **«ԷԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ»** организованной с целью приобретения **лабораторного оборудования для международной аккредитации фармацевтического факультета** для нужд фонда «Ереванского государственного медицинского университета имени Мхитара Гераци», ниже предоставляет запрос полученный от 21-го февраля 2025 года относительно приглашения с тем же кодом и разъяснение по нему, предоставленное, 24-го февраля 2025 года.

**Запрос N 1** Уважаемые Партнеры, анализ приглашения на процедуру закупки (далее - Приглашение) под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ» выявил, что технические характеристики высокоэффективного жидкостного хроматографа не соответствуют требованиям законодательства РА «О закупках». Для характеристики высокоэффективного жидкостного хроматографа, предусмотренной частью 2, установлены дискриминационные и противоречивые стандарты, а именно:

- представленные стандарты являются дискриминационными, так как распечатаны из технической характеристики, размещенной на сайте конкретного производителя (доказательством этого является то, что распечатанная характеристика была отправлена на адрес электронной почты, указанный в приглашении), при этом не определены максимальные или минимальные характеристики, которые приводят к покупке товара конкретной модели, что противоречит требованиям, установленным статьями 13 части 2, пунктами 1 и 2 Закона о закупках.

- представленные стандарты противоречат друг другу, поскольку в технической характеристике представлен аналитический высокопроизводительный насос жидкостного хроматографа, инжекционная система, обеспечивающая полупрепаративные и препаративные инъекции, но детектор требует различных микро/нано высокопроизводительных жидкостных хроматографических проточных камер, несовместимых между собой в одной системе. В связи с вышеизложенным, в целях обеспечения равных условий конкуренции, предлагаем внести изменения в Приглашение, приведя его в соответствие с требованиями законодательства РА «О закупках».

**Разъяснение N 1:** В ответ на запрос сообщаем следующее:

Обязательные и допустимые нормы составления технической характеристики не ограничиваются пунктами 1 и 2 статьи 13 части 2 Закона РА "О закупках" которые четко определены частями 1, 2, 3, 4 и 5 статьи 13 Закона РА "О закупках", а также пунктом 22 Порядка организации процесса закупок, установленного Постановлением Правительства РА №526-Н, и составляющие их совокупность, а именно:

**Согласно статье 13 Закона РА «О закупках»:**

**1.** Характеристика предмета закупки должны полностью и ясно описывать характеристики приобретаемого товара, работы или услуги, условия их приобретения и оплаты, исключая вариативное толкование. В договор закупки включены характеристики предмета закупки, включающие также цену договора.

2. Характеристики предмета закупки

1) должен обеспечить равные условия конкуренции для потенциальных участников;

2) не должно приводить к возникновению необоснованных препятствий конкуренции в процессе закупок;

3) должен быть объективно оправдано и адекватено потребности,с какой целью совершается данная покупка;

4) содержать полное и адекватное описание характеристики, технических данных предмета закупки, а в случае работ - также перечень объемов, график и другие неценовые условия.

3. Исходя из специфики объекта закупки, к их особенностям относятся, насколько это возможно, качество, стандарт, безопасность, условные обозначения, терминология, упаковка, обращение, размеры, проекты, а также другие особенности объекта закупки, основанные на международных стандартах и нормативно-технических документах и стандартах, действующих в Республике Армения, а при их отсутствии - на технических условиях временных условий.

4. Характеристики предмета закупки также можно определить как эксплуатационные или функциональные (функциональные) описания, которые должны быть представлены с достаточной точностью, чтобы участники и заказчик могли точно понять предмет договора.

5. Характеристики приобретаемого товара не должны содержать претензий или ссылок на какой-либо товарный знак, фирменное наименование, патент, дизайн или модель, страну происхождения или конкретный источник или производителя, за исключением случаев, когда без них невозможно описать приобретаемый товар.

**Согласно пункту 22 Порядка организации процесса закупок, установленного Постановлением Правительства РА №526-Н:**

22. При определении характеристик предмета закупки следует учитывать, что им должны удовлетворять более одного возможного участника. Полнота и соблюдение определенных выше обязательных и допустимых норм обеспечиваются частью 2 статьи 13 Закона, упомянутой в Кроме того,

Согласно статье 3, части 1, пункту 1 Закона РА "О закупках":

1. Целью настоящего Закона является обеспечение стоимости компенсации в процессе закупок, а именно:

1) приобретение товаров, работ и услуг в соответствии с потребностями, необходимыми для выполнения возложенных на заказчика полномочий, с адекватным вознаграждением;

**Согласно пункту 3 части 2 статьи 3 того Закона:**

**Процесс закупок основан же на следующих принципах:**

**3)** равенство прав на участие в процессе закупки для любого лица независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства.

**Согласно части 1 статьи 7 того же Закона:**

**1.** Любое лицо, независимо от того, является ли оно иностранным физическим лицом, организацией или лицом без гражданства, имеет равное право участвовать в процессе закупки.

Учитывая вышеизложенное, сообщаем Вам, что:

1. Техническая характеристика, определенная частью 2-й приглашения на процедуру закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ», составлена с соблюдением обязательных и допустимых норм законодательства РА «О закупках»:

2. Заказчик самостоятельно принимает решение и соответственно подготавливает необходимые для его нужд технические характеристики объекта покупки, соблюдая обязательные и допустимые требования законодательства РА «О закупках».

3. Технические характеристики продукции, определенные 2-й частью процедуры, составлены исходя из реальных потребностей заказчика с соблюдением вышеуказанных требований законодательства **РА «О закупках»** и не содержат каких-либо ссылок.

4. Хотя в Вашем запросе не указано, какая статья законодательства о закупках требует определения диапазонов и интервалы, тем не менее, сообщаем Вам, что для параметров спецификации либо определены диапазоны, либо указаны выражения "больше", "меньше", например:

Более 600 бар или 8702 фунтов на квадратный дюйм – более 5 мл/мин.

Более 200 бар или 2901 psi – более 10 мл/мин.

Поэтому, пожалуйста, внимательно изучите приглашение.

5. Предлагаемые проточные кюветы для детектора означают, что прибор должен иметь возможность работать со всеми опциями в зависимости от проводимых исследований.

6. В Вашем запросе не предоставлено никакого обоснования соответствия изделия заявленной технической спецификации одному производителю, в частности техническим характеристикам, указанным во 2-й части процедуры закупки. Распечатанная спецификация, прилагаемая к запросу, дает некоторое обоснование. соответствие последнего техническим условиям, определенным в приглашении, однако не оправдывает его единственности, но если в соответствующей части запроса говорится о соблюдении пункта 22 приказа, то следует отметить, что при определении технических условий по указанному пункту следует учитывать, что их должны удовлетворять более чем один возможный участник, а не производитель.

7. Наличие у производителя или производителей любого товара или продукции одного или нескольких представителей на территории РА не ограничивает участие этого производителя или представителей в процедурах закупок в соответствии с законодательством РА о закупках.

8. При этом сообщаем Вам, что в технических характеристиках приглашения для всех видов продукции определено следующее условие:

***При упоминании любого товарного знака, фирменного наименования, патента, дизайна или модели, страны происхождения или конкретного источника или производителя применяется фраза «или аналогичный».**

С учетом вышеизложенного сообщаем вам, что если запрос сделан с целью участия и потенциальный участник считает, что его участие ограничивается какими-либо особенностями приглашения на процедуру, в том числе теми, которые указаны в технической характеристикой, определенной в разделе 2, которая, по его мнению, и с дальнейшим четким обоснованием содержит ссылку или ссылки на торговую марку, фирменное наименование, патент, эскиз или модель, страну происхождения или конкретный источник или производителя, тогда применимо выражение «или аналогично» при условии, что характеристики, предлагаемые как аналогичный,

должны быть аналогично потребностям заказчика, для удовлетворения которых осуществляется данный процесс закупки.

В приглашении также оговаривается, что в случае приобретения продукции оценочная комиссия процедуры также оценивает соответствие полных описаний представленной продукции требованиям приглашения.

**Для получения дополнительной информации в связи с обьявлением можно обратится к секретарю оценочной комиссии Павлу Габреляну.**

**Телефон 010 301250 (внутренний номер 250)**

**Эл. Почта marketing.ysmu20@gmail.com**

**Оценочная комиссия по котировке цен по процедуре закупа «ԵԱԾԱՊՁԲ-2025/16-9-ԵՊԲՀ»**

| | | |
|---|---|---|
| **Председатель комиссии** | *(подпись)* | **Баграт Енокян** |
| **Члены комиссии** | *(подпись)* | **Арусяк Жамгарян** |
| **Секретарь комиссии** | *(подпись)* | **Павел Габрелян** |